## Հիմնավորում թիվ 4 երաժշտական դպրոցի

## համերգային դահլիճի վերանորոգման համար

Գյումրու Ա. Բրուտյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոցը 50-ամյա պատմություն ունի: Խորհրդային տարիներին /եւ դրանից հետո մոտ 1 տասնամյակ/ եղել է մասնագիտացված երաժշտական դպրոց՝ տալով բազային կրթություն միջին մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական երաժշտական հաստատությունների համար:

Շենքը տիպային է, ուսումնական մասից առանձին՝ համերգային դահլիճով: 200-250 աթոռ ծանրաբեռնվածությամբ դահլիճը կարելի է ծառայեցնել որպես կամերային դահլիճ, սպասարկել դասական երաժշտության միջոցառումներ: Ակուստիկ իմաստով եւ չափորոշիչներով դահլիճը միանգամայն համապատասխանում է բոլոր ընդունված նորմերին եւ նորոգման /վերապրոֆիլավորման/ պարագայում կարող է հրաշալիորեն ծառայել որպես կամերային դահլիճ:

Գյումրում այս պահին չունի այս ծավալով պրոֆեսիոնալ կամերային համերգային դահլիճ. դրամատիկական թատրոնը, որ միակ այլընտրանքն է, ըստ էության թատերական դահլիճ է: Շատ հաճախ մանավանդ դասական արվեստը ներկայացնող գործիքային երաժշտությամբ համերգային ծրագրերը Գյումրի բերելը դառնում է խնդրահարույց:

Վերջին տարիներին դպրոցի դահլիճը որեւէ նորոգման չի ենթարկվել, գույքը մաշված է, բեմն ու հետնաբեմը չեն համապատասխանում ժամանակի չափանիշներին: Խնդրի լուծումը կարող է մեծ ազդեցություն ունենալ քաղաքում դասական-համերգային արվեստի զարգացման հարցում, փակել կամերային համերգասրահի բացակայության հարցը:

Մշակույթի եւ երիտասարդության

հարցերի բաժնի պետ / [signature] / Լ. Թովմասյան

02 06 2021թ.

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի Շչերբինա 3ա հասցեում գտնվող թ. 4 երաժշտական դպրոցի շենքի մասնակի վերանորոգում

| | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Գումար /հազ. դրամ/ |
|---|---|---|
| 1 | Քանդման աշխատանքներ | 2 000 |
| 2 | Դահլիճ վերանորոգման աշխատանքներ | 8 500 |
| 3 | Միջանցք վերանորոգման աշխատանքներ | 1 600 |
| 4 | Կտուրի վերանորոգման աշխատանքներ | 2 500 |
| 5 | Դահլիճի լուսավորություն | 1 200 |
| 6 | Այլ աշխատանքներ | 200 |
| 7 | Ջեռուցման համակարգ | 4 000 |
| | Ընդամենը | 20 000 |

«Արտ-Նախագիծ» ՓԲԸ տնօրեն Հ. Մալխասյան

«ԱՐՏ-ՆԱԽԱԳԻԾ» «ART-NAKHAGITS» 05506202